ԼՈՅՍ

ՀԱՆԳԷՍ ԱԶԳԱՅԻՆ

կը հրատարակուի Շորեքշաբթի եւ Շաբաթ օրերը: Տարեկան գինն է մէկ լիրա օսմանեան: Մէկ թերթը 40 փարա արծաթ: Նամակ կամ ո եւ է գրութիւն պէտք է ուղղել Ա. Մ. Քափամաճեան Կոստանդնուպոլիս, Մերձաւ Չարշի Բիւղտի Քէճեճիի խանի տակ Մ. Կ. Սարըեանի տպարանը:

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 107 — 1880 — ՇԱԲԱԹ 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՀԱՅՔ ԵՒ ԵՒՐՈՊԱ.

Գ.

Այս նիւթիս վրայ մեր նախընթաց յօդուածոց նկատմամբ իրաւունք առնուղ ամէն կարգի բաղում ազգայինք բանիւ և գրով հաւանութիւն յայտնեցին մեզի, որմէ կրնամք մակաբերել թէ յաղողը եմք ճշդիւ բացատրել այն տպաւորութիւնը, զոր իրաց վիճակն յառաջ բերած է հասարակաց կարծեացը վրայ:

Ազգն ինքզինք Եւրոպիոյ ճանչցնելու դաղափարին դէմ չէինք: Այս բանը ժամանակի հարկ մ'էր, զոր վճարեց, որով նա և ճանչցաւ զԵւրոպան:

Ներկային փորձառութեամբն ևս օժտեալ Հայ ազգն, որ արևելից մէջ գարերէ 'ի վեր քաղաքակրթութեան ժիր և անխոնջ մշակն է, օգնութիւնը միայն իրմէ սպասելու վիճակին կը դառնայ, որ իրեն համար նոր իրողութիւն մը չէ:

Անցեալին մէջ ամէն առեն երբ Հայն ինքնօգնութեան դիմած է, իր ակնկալութեան մէջ երբեք չէ վրիպած. բայց երբ արևմտից վրայ յոյս դրած է, այս բանն իրեն շատ սուղի նստած է:

Ասոնք պատմական անժխտելի իրողութիւններ են, զորս ուրանալ և հերքել վտանգելն անկարելի է:

Ասա աւելորդ կը համարիմք թուել ինքնօգնութեան բարիքն, որոյ օրինակները պակաս չեն մեր ազգային պատմութեան մէջ:

Խիստ զօրաւոր փաստեր ունիմք հերքելու ոմանց այն կարծիքը թէ մեր ազգային պատմութիւնը չոր ու ցամաք և վհատեցուցիչ դէպքերու շղթայ մ'է:

Աննկերելի սխալ մ'է այս, որ պատմութիւնն ուսումնասիրած չըլլալու ձախող ձեռնարկութենէ յառաջ եկած է:

Զուրացուիր արդարև որ մեր պատմութեան մէջ տխուր դէպքեր խիստ շատ կան.

սակայն չուրացուիր նաև որ դուքա անճահ քաղաքականութեան հետևանքներ էին։

Ցանցելումն՝ ինչպէս և այժմ՝ արևմըտեան քաղաքականութիւնն արևելեանին հակառակ դանուած է, որք տարբեր շահերու և զանազան նկատմանց պատճառաւ յաւէտ անհաշտելի են։

Արևմտեանն՝ ըստ երևութին թէև ջերմեռանդ՝ սակայն իր յոզդոզդ և երերուն կացութեամբն և հետևանաց եղրակացութեամբն արևելից մէջ միշտ անջոր և տկար ուսոյ և ազդ յարակցիլը մեզի համար յաւէտ վտանգաւոր եղած է, զոր ընդարձակ կերպիւ բացատրեցինք մեր առաջին յօդուածով։

Իսկ արևելեանը՝ թէ և կորուսած այժմ իր վաղեմի հզօր ազդեցութիւնը, թէ և ըստ երևութին անջոր և քաղաքակրթական տեսակէտով թէ և նուաղ համակրելի, բայց ունի ներքին այնպիսի զօրութիւն մը, որ դիւրընկճելի չէ և խառն ընդ արևմտեանին՝ իր դիւանագիտական հնարքներովը կրնայ տակաւին բազմայ զարմացում պատճառել։

Ճշմարտութիւն մը խոստովանած կ'ըլլամք, երբ ըսեմք թէ արևելեան քաղաքականութիւնն անցեալին մէջ մեզի համար այնքան աղետաբեր եղած չէ, որչափ արևմտեանը. և եթէ առաջինն, այն է, արևելեանը, վտանգ սպառնացեր է, ատոր չարժառիթն արևմտեան քաղաքականութիւնն եղած է։

Եթէ Արշակունիք, Բագրատունիք և մանաւանդ Ռուբինեանք չկրցան արևելեան քաղաքականութիւնը, եթէ, կ'ըսեմք, ղեկտ չկրնային արևմտեանին, անհերքելի է թէ Հայն իր հայրենի երկրին մէջ իր դիրքն ու քաղաքական անկախութիւնը չեր կորնցներ։

Անցեալին մէջ արևելեան քաղաքականութեան մեզի դէմ եղելուն պատճառն ոչ թէ ազգին դրիստոնէութիւնն ընդունած ըլլալն է, այլ քրիստոնէութեան պատճառաւ մեր նախնեաց՝ արևմտեան քաղաքականութեան ղեկտ երթալն եղած է։

Ճիշդ հետևութիւնն այս է որ մեր հայրենի տունն արտաքին պատճառներէ աւելի ներքին անճահ քաղաքականութիւնը քանդեր ու կործաններ է։

Որովհետև մեր նպատակն օկղբունքներու վրայ խօսելով՝ ներկային մէջ մեզի համար ուղղութիւն մ'առաջարկելու վրայ կը կայանայ, ըստ մեզ, յոյժ բանաւոր կը թուի առանց ո'ր և է օտար քաղաքականութեան մը անձնատուր լինելու՝ ինքնօգնութեամբ մեր ներքին վերակազմութեանն աշխատիլ, անպատրաստ չգտնուիլ, մեր վրայ իշխող տերութեանց համակրութեանն արժանի ըլլալ, աղաւնոյ միամտութիւն և օձի խորամտութիւն ձեռք առնուլ և դրացի ցեղերու հետ քաղաքագիտաբար վարուելով՝ նոցա կռակածը փարատելու և բարեկամութիւն ձեռք բերելու ջանալ միշտ։

Դէպքերէ օգուտ քաղելու համար պարզ, և յստակ քաղաքականութիւն մ'ըլլալ կը թուի մեր այս առաջարկութիւնը, զոր կը յուսամք թէ ազգային նորակազմ վարչութիւնը կը հաճի ուշադրութեան առնուլ։

Թղթակցութիւն ի կարնէ առ կօլա

«Իլհան գետը մին է այն 82 գետերէն, որ կարնէն դէպ ի հարաւ—արևելք կիսաշրջանակի ձևով տարածուած են Եփրատի եզերքը։

Այս գետը նշանաւոր է իր ծծմբաթթու և երկաթեայ հանքային ջրերով։

Բնակիչք հաւատացած են թէ Իլհանի ջուրերը բազմածնութեան վրայ մեծ ազդեցութիւն ունին. ուստի և ամառները մեծ բազմութիւն կը գիմէ անդ, որ բազմամարդ քաղաքի մը կերպարան կառնու։

Մեծ մասամբ ամուլ կանայք կերթան, ինչպէս և երիտասարդներ՝ որ ազդային պարերով ժամանակ կանցնեն լուսին գիշերները մինչև առաւօտ։

Անդ պատահեցայ երևելի հարուստներու, բաս-

սըրմաճեան եղբարց, որք ընդարձակ կալուածներ և գործարան ունին, ուր ապտխտ կը պատրաստեն Անատոլուի ղօրաց համար:

Այս միան (ապտխտը) իրրև չոր կերակուր՝ դինւորաց կը տրուի, զոր՝ պայուսակներուն մէջ կը պահեն, և ամառուան ամենատաժանիկ տաքուն իսկ չվնասուիր:

Բանտրմաճեան եղբարք յոյժ սիրալիր ընդունելութիւն ըրին ինձ, և ինչ որ տեղեկութիւններ տուին:

Ամէն, որ դեռ հոս կը չարունակէ անդ և բազմ՛ գոհեր կը տանի, ինձ տրուած տեղեկութեան նայելով՝ անցեալ պատերազմին Հայաստանի բնակչաց թիւը և Ռուսական բանակները կերակրելու սահմանած լինելէն յառաջ եկեր է, և ահա այս պատճառաւ ցրուեն սպառեր է ամբարանոցներուն մէջ, յորս կը պահեն եղեր մի քանի տարուան հացահատ, և միւս տարին ալ երաշտութիւնն յաջորդեր է:

Ուրիշ տեղերէ ցրուենի վախադրութիւնն յոյժ դժուարին է, որովհետև երթեւեկ հարդ ճանապարհներն օսմանեան իշխանութեան ժամանակ ուրուեր ու քանդուեր են:

Կարնոյ նահանգի բնակչաց թիւն իրր 330,000 կը հաշուի, որոց 220,000ն Հայ են, որք երկրագործութեամբ, վաճառականութեամբ և արուեստով կը պարապին: Երկրագործութեան մասին Հայք այնպիսի նշանաւոր դիրք մ՛ունին, որ երբ նոքա երկու տարի առաջ Ռուսական զօրաց հետ գաղթելու կը պատրաստուէին, իմանալով վաշտն ըսած՝ «եթէ հայ մնալուն որ իմ գործերն առանց Հայ գիւղացւոց կարող կը լինին գէթ 40 օր ևս պահպանել իրենց դրութիւնն, ես թողլ կուտայի որ դուքս Ռուսաց զօրաց հետ գաղթեն. սակայն յայտնի այն է որ մեր գործն, որ 40 ամիսէ մի վեր թուշակ չէ ըստացեր և միայն մի հաշիւ տրուց Հայ գիւղացիներէ առնուած նպարեղէն տարած է, տակին երկու աւուր մէջ կը կոտրուի, եթէ ծոյլ և անգործ Տաճկաց վըրայ յոյս դրուի:

Այս պատճառաւ իմանալի վաշտն պարտաւորեցաւ քաղաքական նկատումներ առօրեայ նկատմանց ղոհելու, և հետևաբար ազդեցութիւն ունեցող Հայոց հետ կապուելու, չքանչաններ և այլ հնարներ խոստանալով որպէսզի Հայ գիւղացւոց գաղթելուն առաջքն առնուն:

Որովհետև երրակի մորթը ցոյց տուաւ որ Ռուսաց պատերազմի ժամանակ Փոքր Ասիոյ Հայք ապագային մեծ հարկատարութիւն ունին, ուստի Ռուսաց կողմէ անհրաժեշտ համարուեցաւ որ Հայք մնան իրենց տեղերն և չգաղթեն:

Այս խորհուրդն առանց ընդդիմութեան դարձաբերեցաւ: Թէպէտ Ռուսաց կարինը թողլէն ետև Թրքաց արևնտահայ վրէժխնդրութիւնն երկիւղ կ՛ըստանար այն հիւրասիրութեան համար՝ զոր ցոյց տուին Հայք Ռուսաց, սակայն Կովկասու փոխարքայի նախատեսութեան չնորհիւ հետևութիւն մը չտանեցաւ, որովհետև Ռուսաց լիազօր գործակալին հրամանն ըստ սրինաւորեամբ հակել Հայոց ապահովութեանը մասին:

Գրեթէ իւրաքանչիւր Հայաբնակ գիւղ կայ բարեկարգ եկեղեցի և դպրոց, ուր երկու տեղ ուսանողք միասին կ՛աշխատին: Զարմանալի է, որ դասագաւառելէն ետև ազգկանք և տղայք կանոնաւորքայլերով միասին մատն կուգան, որպէս զի առաջնորդէ ուսուցիչն: Տղայք կը քալեն ազգկանց ետևէն:

Այս մատն գալու ժամանակ մորթիկ ամազանուհիները կը նմանին այն դիւցազնուհեաց, որք իրենց ետևէն կը տանին կրկնակի մեծահասակ տղայքը:

Նոյն իսկ Կարնոյ մէջ ալ բաւական դպրոցներ կան, որոց մին տղայոց և միւսն ալ աղջկանց մէջ նախորդ վարժարան է:

Մօտերս վիճակաւոր առաջնոր Գեր. Օրմանեան թելադրութեամբ բնակիչք մի գումար հանգանակեցին, որ պիտի գործածուի աղջկանց համար բազմապատեհական վարժարան մը բանալու:

Դիտաւորութիւն կայ նաև տպարան և ամեն օրեայ մի լրագիր հիմնելու, սակայն պատիժ—տուփ անցնելուն և բարենորոգմանց գործադրուելուն կ՛ըսպասեն:

Վանէն աղիկալի լուրեր կ՛առացուին»,

ԹԱՂԱՑԻՆ ԺՈՂՈՎ

Ամեն ժամանակէ աւելի մանաւանդ այժմ պէտք էր որ իւրաքանչիւր Թագի մէջ դէպ ի յառաջդիմութիւն շարժում լինէր, վարժարանաց վիճակը բարւոքէր, երևումից կանոնաւոր հսկողութիւն լինէր և ի նպաստ վարժարանաց դրամական արդիւնքն արդիւնաւորէր. յայտնի է սեռնել որ կան տեղեր, ուր կատարեալ անփութութիւն և անշար-

ժուԹիւն կը տիրէ, և կան ալ՝ ուր անվերջանալի ամուլ վէճերը և խռովութիւնք անպակաս են, իբր Թէ այս լինելը ժամանակիս պահանջումն և ատանք լինէին Հայուն պարտականութիւնքը։

Յայտնի է Թէ իրայ վիճակը խիստ ծանրակշիռ է և յուսահատական, զոր դարմանելու հնարաւոր միջոցը դրութիւնը փոխելու մէջ դանալ կը կարծենք։

Ոչն տեսութեամբ համակրեցանք բարի յիշատակ Ռուսինեանի այս մասին ներկայած մի առաջարկութեանը, զոր՝ ասկէ 5 տարի առաջ պաշտպանեցինք յատենի Ազգային Ժողովոյ։

Ժամանակի պարագայից փոխխոսութեան պատճառաւ ինչպէս ամեն ներքին խնդիր՝ նոյնպէս և այս խնդիրն ալ առ կախ մնաց, բայց այժմ որ ամեն ժամանակէ աւելի անհրաժեշտ է խորին ուշադրութիւն դարձնել մեր ներքին խնդրոց, որովք կրնանք մեր ներքին վերակազմութեանն հասնիլ, յոյժ բարեպաշտական կը համարիմք կեդրոնը բարեկարգել նախ, կեդրո՛նը, որոյ դրութիւնը մեծ աղդեցութիւն կ'ընէ դաւառաց վրայ, ըստ որում դաւառներն ամեն բան կեդրոնէն կ'ակնկալեն ու կ'սպասեն։

Ընդհանուր դրութեան մէջ Թաղային մատակարարութիւնը վերաքննութեան ենթարկելու մասին 3—4 նիստ առաջ մի քանի եբրեախոհականց հետ մեր մի զրաւոր առաջարկութիւնն Ստեփանոսեան Դիւանին յանձնուեցաւ, բայց յորմէ հետէ ծրագիր մը չներկայացաւ ոտկաւին։

Զեմք դիտեր Թէ ոյն յապաղումն ի՛նչ և ո՛րպիսի պատճառաց արդիւնք է, սակայն ի՛նչ որ ալ լինի պատճառն, անհրաժեշտ է որ այսուհետև ներքին խնդրոց մեծ ուշադրութիւն ընծայուի, որովհետև, ինչպէս ըսինք, իրաց վիճակն յոյժ ծանրակշիռ է և ոչ երկար քաղաքական։

Ապագէն պէտք է մտնեմ որուն աղգային օրինաւոր շարժման, որ յոյժ կարևոր է ապագային վերաբերութեամբ։

Մեր ազգային բոլոր պաշտօնական մարմիններն հարկ է որ հասկնան այլ և այնմանակիս պահանջմունքը, զանոնք գոհացնելու միջոցներ ձեռք առնուն և գործադրեն Թեան մասին օրինակ լինին ժողովրդեան։

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ

Կեդրոնն երբ այսպէս լինի, այսինքն, տարտամ և անորոշ դրութեան մէջ, դիւրին է մակաբերել և գաւառաց վիճակն, որ հարկաւ աւելի տխուր է և արժանի խորին ուշադրութեան։

Մեք քանիցս դիտել տուած եմք Թէ գաւառներն իրենք իրենց, այն է, առանց առաջնորդի չեն չարժիր երբեք, և Թէ ներկայ քաղաքական դրութեան նկատմամբ առաջնորդն ամենամեծ նշանակութիւն ունի, որոյ ընթացքէն և չարժուձէն կախեալ է գաւառի մը ներքին վիճակի բարւոքումը։

Սակայն չեմք դիտեր Թէ այս ճշմարտութիւնն ո՛րու և ի՛նչպէս հասկընալու է։

Կան բազմահայ ընդարձակ գաւառներ, որ բանիբուն, դործունեայ, ուշիմ, լեզուագէտ և ժամանակիս պահանջմունքն հասկըցող և ժողովրդեան մասյին և բարոյական պէտքերը գոհացնելու կարող ու չարժուն աղդող առաջնորդէ զուրկ կը գտնուին իսպառ, վերջապէս այնպիսի առաջնորդէ, որ կարճ խօսքով՝ կրնան հասկընալ ժողովուրդին և տարածել լինքնաճանաչութեան և լինքնօգնութեան դաղափարներն և տեղւաւորել զատանք նորա մտացը մէջ։

Մեք անձին փորձառութեամբ ճանչցուլ գաւառացոց ներկայ դրութիւնն ու կացութիւնն, առաջնորդական իրաւունքը Ս. Պատրիարքին և վարչութեան դարձնել կառաջարկենք։

Գարձեալ կը պնդեմք մեր այն առաջարկին վրայ, ըր յոյժ օգտակար կը համարիմք այնպիսի պատճառներու տեսութեամբ, ըրոս բացատրելը դժուարին չէ, և իւրաքանչիւր ոք շատ շուտ վերահասու կը լինի, երբ ուշադրութեան առնու այն վիճակին, որում են մեր դաւառացի ազգայինք:

Ընդդիմադիրք փաստ մ'ունին միայն, այն է, թողուլ ժողովուրդն որ փորձառութեամբ դիտակցութիւն ունենայ:

Չեմք ուրանար ազգ օգտակարութիւնը, սակայն ներուի մեզ դիտել տալ թէ այդ ակզբունքը մեր դանուած վիճակին շատ յարմար չդար, որովհետև չեմք կրնար ժամանակի կորուստներ ղոհ տալ. ուստի լաւագոյն է վերապահել այդ կէտն և ընդունիլ մեր առաջարկութիւնն, որոյ անմիջական արդիւնքը կարելի է քիչ ժամանակի մէջ վայելել:

Տիգրանակերտէն, Փարբերդէն և Հայաստանի զանազան դաւառներէն հասած տեղեկութիւնք, որ շատ ճիշդ կը բացատրեն իրաց վիճակն ու հանգամանքն, անհրաժեշտ պարագ կը դնեն մեր վրայ շուտով գարման տանիլ և արագ միջոցներ ձեռք առնուլ առանց երբեք վայրկեան մ'անդամ կորուսանելու, որ այլևս բնաւ ներելի չէ:

Կը յուսամք թէ անշնար չէ այս մասին համաձայնութիւն գոյացնել, երբ ներքին գործոց խորհրդականն այսպիսի առաջարկութիւն մը ներկայէ Ազգային ժողովոյ:

Հետևեալ նամակին հրատարակութիւնը խնդրուած է մեզ:

1880 հոկտ. 20, Սալմաթօմրուք

. . . Տէր,

Գաղջր է մեզ յուսալ թէ պիտի հաճիք, թողլս երիտասարդութեան թարգման կանգնիլ, ներկայիս ըլյս տալով:

Թողլս հարազատ զաւակն՝ Գերաչնորհ Գրիգորիս Եպիսկոպոս Ալէմաճեան, ինչպէս կանխաւ ծանուցուած էր, երկի՝ կիրակի 19 հոկտ. Ս. Յովհան Ոսկեբերան Եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ մատուցանելով՝ ու խնամատարից քարոզ խօսեցաւ:

Նորին Գերապատուութիւնը, փիւնիկեայ նաւապետին առ Յովնան ուղղեալ «պատմեա՛ մեզ, ուսն է՞ր հասեալ են չարիքս ի վերայ մեր» խօսքն իր քարոզին բնաբան ընելով, անհերքելի ապացոյցներով հաստատեց թէ ազգիս այսօրուան թշուառակոյտ թեան պատճառներէն առաջինն եղած է անմիութիւնը:

— Խրատեց ժողովուրդը սիրել զմիմեանս, սիրել ազգ, կրօնք և հայրենիք, յորդորեց անյիշաչարութեան, սէրը մշտաւև չկրնալ լինիլ:

Նաև «դուն քեզ օգնէ, Աստուած ալ քեզ պիտի օգնէ» խօսքը ոչ թէ առակ, այլ աստուածային կամք և պատուէր լինելը ապացոյցով հաստատելով ընչյս և վահան Մամիկոնէի, միմիայն ազգին պատիւը պաշտպանելու համար Պարսից դէմ շարունակ 30 տարի մղած պատերազմը, ու ստացոյ իրենց ազգային պատուոյ պաշտպանութեանն համար ըրած անձնանուէր զոհողութիւնքը յիշելով, ժողովուրդն ինքնօգնութեան և ազգային պատիւը օտարին դէմ պաշտպանելու հրաւիրեց:

Հատակ յետոյ, դիտել տուաւ թէ Հայը Հայով միայն պիտի կարենայ փրկուիլ, դի օտարը միշտ օտար դոլով, իր համակրութիւնն պզտութեան և կաթոլիկութիւնն ոչ կատարեալ անկեղծ է:

Ի վերջոյ, Հայաստանի սովալոյ խեղճ վիճակը, ինչն ականատես վկայ, սրտակսկիծ ներկայացնելով, ժողովուրդին դիտակցութեան քարոզ նպատակ սովեալ Հայ աշխարհին:

Յանուն թողլս դպրոցաց երիտասարդաց, Նորին Գերապատուութեան, հրապարակաւ շնորհակալութիւն յայտնելէ յետոյ, կուգամք յայտնել այս առթիւ մի խոնարհ խնդիր:

Այսօր ազգին մէջ մի գովելի ձկտում կայ դաստիարակելու Հայաստանի սերունդն. լաւ, և պէտք է որ օրըստօրէ ընդհանրանայ այս ձկտումն. սակայն, ոչ նուազ ուշադրութեան արժանի խնդիր մ'է և, ի մէջ այլոց՝ զրոս Լոյսդ իւր «մեր պատքերն»ով ազգին ուշադրութեան ներկայած է, թէ՝ մանուկը դաստիարակելով միայն, շատ ուշ պիտի կարենանք հասնիլ մեր նպատակին, այն է յառաջդիմութեան: Մանուկն ոչ նուազ աւելի պէտք է,

զարդացնել խմբակականութիւնն մանկան ծնօղին. վասն զի անպատեհարակ ծնօղի մը չէ կարելի ճըշմարիտ փափաքող լինիլ իւր որդւոյն դաստիարակութեան։

Սակայն, առ այս միջոցներ կը պակսին մեզ, զի կիրակնօրեայ դասարանաց և լսարանի դրութիւնն հիմնապէս դեռ չէ ընդհանրացած մեր մէջ. ուստի այս մասին եղած աշխատութիւն և ջանք, դրեթէ միշտ ապարդիւն մնացած են. ինչպէս անցեալներս Պալատու թաղին մէջ բացված լսարանն մէկ տարիէն ինքնին դադրեցաւ, և Սալմաթօմրուքի երկրորդ անգամ բացած կիրակնօրեայ վարժարանն դադրելու տեսար հարիւն ենթարկուած է. այս վիճակն ունեցած են նաև ուրիշ թաղերու մէջ եղած նոյն օրինակ ձեռնարկներ։

Եւ որովհետև նոյն միջոցներէն սպասված արդիւնքը ձեռք բերել դժբաղդաբար դեռ կանուխ է մեզ համար, ուրեմն հարկ անհրաժեշտ է որ այս դէրն ու պաշտօն քարոզիչներն կատարեն եկեղեցեական բեմերէն. այո՛, պէտք է որ Պօլսոյ բարոզիչները կարող և երիտասարդ ղդայում ունեցող անձերէ լինին, և ո՛չ թէ այնպիսի հին ղլխոց ապիկարներէ, որոյ գործ միայն մնացալ քարոզել է. պէտք է Պօլսոյ հասարակ ժողովուրդին սպասուց և իրաւանց դիտակցութիւն տրվեցնել, և անտարբերութենէ զգուշացնել. և ահա այն ժամանակ դիւրին պիտի լինի մեզ հասնիլ մեր բաղձանոց։ Իրրև օրինակ յառաջ կը բերեմք թէ կիրակի օրն տվեալոյ թաղալթը 180 դրչ հասյթ ունեցաւ, մինչդեռ նախորդ կիրակիներն հազիւ 50—55 դրչ։

Ախտարև չա՛տ և չա՛տ պէտքեր ունիմք. գառն վտանգներն հասատատեցին զմեզ. ուստի մեզ մեր ներքին բարւոքման ունեցած անհրաժեշտ պէտքերնիս, որոյ վերայ կարող գրիչներ բաւմիցս խօսած են։ Յաւէ՛ տարի որ ամեն թաղ իւր թաղին ներքին բարւոքման ձեռնարկէ. զի առանց ներքնապէս բարւոքեալ լինելու, անկարելի է օգտիլ արտաքին բարւոքումէ։

. . . Տէր, սոյն կարևոր կէտը Ձերդ ուշադրութեան յանձնելով, կը խնդրեմք որ համիքը ընդունիլ մեր խորին ընդհակակիրը։

Մնամ ևն.

ՍԱԼՄԱԹՕՄՐՈՒՔՑԻ ՄԸ

ՕՐԱՑՈՑՑ

Ընթերցողը յօդուածիս խորագիրը տեսնելով կարծեն թերևս թէ առարկեմբ բանասիրական տեսութիւն մը պիտի ընեմք։

Մեք առայժմ այդպիսի դիտաւորութիւն չունիմք. մեր նպատակն է յորդոր և հրաւէր կարդալ մեծարոց աղգայնոց, որպէսզի իրաքանչիւր օր դէթ մի օրինակ դնէ յառաջիկայ տարւոյ Օրացոյցին, որ Աղգային Հիւանդանոցի հաշւոյն տպագրուած է, և հետևաբար հասյթն ալ անոր կը վերաբերի։

Ընթերցողը հարկաւ կը յիշեն թէ ազգային յիշեալ հաստատութիւնն այժմ տասն ժամանակէ ասեն կը դրաւէ մեր ուշադրութիւնն, ըստ որում տեսութենէն տրուած հայյը՝ կտրելուն պատճառաւ՝ բնականաբար ծախքն ուելցած և հասյթը պակսած է։

Քաղցր և նուիրական պարտականութիւն է ուրեմն յանուն Ազգային Հիւանդանոցի տասն տեսակ ձեռնարկութիւն քաջալերելով մխիթարել անդ տառապարեալ հարիւրաւոր աղգայիններն, որք հասարակաց օգնութեանն ու ձեռնտուութեանը կը կարօտին,

Ժամանակիս վիկտոսյ — բանաստեղծը, Վ. Հիւկօ, ազդմութիւնն աղօթից քոյրը կ'անուանէ։

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Երէկուան նստի արդիւնքն է, 1.— Վաւերացում 7րդ. նստի տտեղադրութեան. 2,— Սեբաստիոյ Թուղլատար դիւղի աղգայնոց մէկ խնդրոյն յղումն առ Ազգ. Վարչութիւնն. 3.— ընդունելութիւն Մայր-Դիւանի անդամոց հրաժարման և ընտրութիւն Ատենադպրաց (Մ. Մելիքեան էֆէնտի Ա. Ա. տենադպիր և Մ. Զօպանեան էֆէնտի Բ. Ա. տենադպիր). 4.— Ա. և Բ. Ատենապետաց ընտրութիւնը 24 ձայնի անմիաբանութեան պատճառաւ յառաջիկայ նստին թողուած, և 5— վիճաբանութիւն յանձնաժողովոյ տեղեկագրին վրայ 'ի մասին բացակայութեան երեսփոխանաց և տեղափոխութեան խնդրոյն, որոյ մէկ մասը նոյնպէս յառաջիկայ նստին թողուեցաւ։

Ճաշորդ նիստն ուղ օրէն է ։

Այս առթիւ հարկ կը համարիմք խորին ցաւ յայտնել յայն երեսփոխանաց՝ յորոց ոմանք իրենց յաճախ բացակայութեանն և ոմանք ալ՝ որոշեալ ժամէն խիստ ուշ գալուն պատճառաւ ժողովին ատեպ անգործութեան կը դատապարտուի և ժողովուրդն ալ՝ դէմ-բաղդաբար առանց պատճառը գիտնալու, կը դանդատի թէ ժողովը գործ չտեսներ ։

Շատ ճիշդ կ'ըլլար, եթէ ժողովուրդը դանդատեր նախ իրմէ, որ երեսփոխանական ընտրութեանատեն ատեպ անտարբերութիւն ցոյց կուտայ, երկրորդ՝ չատ անգամ ընտրութիւն չընէր քուէ տուած անձին հանգամանացը նկատմամբ և երրորդ՝ չստիպէր իր երեսփոխանն որպէսզի իւր յաճախ բացակայութեամբը ժողովին անգործութեան չդատապարտէ ։

Ամեն արդիւնք պատճառի մը հետևանք է։

Ահա Ազգ. ժողովոյ ներկայ վիճակին պատճառն յիշեալ երեք կէտերն են, զորս ժողովուրդին ուշադրութեանը կը ներկայեմք։

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Կիլիկեոյ Ս. Կաթողիկոսն ու երեք վարդապետներ հակողութեան ներքև Պօլիս բերուելու լուրը, զոր տուած էր Թէրճէմանը— էֆքեար իւր վերջնաթեր թուով, բոլորովին անհիմն է ։

Ըստ մեր մանուաւոր տեղեկութեան՝ Ն. Սրբազնութեան ի Սիս վիճակային ժողով գումարելուն նկատմամբ Բ. Դուռը Պատրիարքարանէն տեղեկութիւն հարցուցեր և տրուած բացատրութենէն գոհ եղեր է ։

Անաւասիկ այս է իրողութիւնը, զոր Պատրիարքարանէն ստուգեցինք ։

Այսպիսի փափուկ և տագնապալից ժամանակի մը մէջ հրատարակելիք լուրերու և տեղեկութեանց մասին մեծ զգուշութիւն և չրջահայեցութիւն հարկաւոր է, մանաւանդ սխալ և անհիմն լուրերու մասին, որ կրնան դուրսէ դէպ հետևանքներ յառաջ բերել։

Այս կէտը կը յուսանք թէ մեր պատուարժան պաշտօնակիցներն ուշադրութեան առնուլ կը բարեհաճին ։

— Կիմանամք թէ աղա Յովհաննէս Այվազովսքի ճարտար պատկերահանը խիստ գեղեցկանկար պատկեր մը ղրկեր է այս անգամ Ամեն, Ս. Պատրիարք Հօր, սա նպատակաւ որ ի տես դրուի և արդիւնքը սովելոց յատկանայ ։

— Նաև կ'իմանամք թէ Գեր. Տ. Մկրտիչին դարձեալ առաջարկուեր է Պատրիարքական փոխանորդութեան պաշտօնը, բայց վերստին չէ ընդուներ ։

— Նիկոմիդիայէն առ մեզ թղթակցութիւն մը դոհութեամբ կը յանուցանէ թէ Գեր. Տ. Սահփան վարդապետ նոյն դաւառին առաջնորդ ընտրուեր է ։

Ն. Գերապատուութիւնն, ինչպէս յայտնի է, երկար տարիներէ ի վեր Փոխ-Առաջնորդութեան պաշտօն կը վարէր ամենայն յաջողակութեամբ, որով սիրելի եղած էր իր վիճակացոց ։

Կ'ըսուի թէ եպիսկոպոսական վկայական պիտի տրուի ։ Գեր. Սահփան վարդապետ իւր հմտութեամբն, անբասիր վարուքն ու անկեղծ ազգասիրութեամբն արդէն արժանի է եպիսկոպոսական տաճկանի ։

. . . Խմբագիր ,

Գործ. ժողովս կը փութայ Ձեր թերթին միջոցաւ իւր չնորհակալիքը յայտնել Վահմ. Լևոն պէյ Գոխամանճեանի որ բարեհաճեցաւ այս անգամ ևս նուիրել ընկերութեանս Խիզանի վարժարանացս մի օրինակ տարեկան (Մասիս) և մի օրինակ տարեկան (Լոյս) ։

Ի դիմաց Գործ. ժողովոյ Խիզանի Ո. տումն. Ընկ.

Ատենապետ

ՎԱՀՐԱՄ Ց. ՄԱՐԳԱՐԵԱՆ

24. Հոկտ. 1880 Կ. պոլիս

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

ՏԵԼԵՄԱԿ ԷՖԷՆԴԻ ԷՐՄԷՐՃԵԱՆ

Նկարչութեան և գծագրութեան արուեստին մէջ ունեցած համբաւեալ հմտութեամբ ըլլալուն ու յաջողակութեամբն հանրածանօթ Տելեմաք Էֆէնդի Էրմէրճեան պատիւ կը համարի ծանուցանել թէ իւր բնակութիւնն ու արուեստանոցն այս անդամ Բերայ Ֆերիմիէ փողոց թիւ 19 տունը փոխադրած է, ուր մեծ. յաճախորդք ամեն օր առաւօտէն մինչև ի ժամ 3 և կիրակի օրերն ալ առաւօտէն մինչև երեկոյ կրնան դիմքը գտնել։

—

ԴԱՍԱՏՈՒԹԻՒՆ ԴԱՇՆԱԿԻ

Համեստուհի տիկնայք և օրիորդք, որ կը փափաքին դաշնակի դասատուութեան, կը հրաւիրուին Գում—գափու, Պաարիարքարան փողոց թիւ 18 տունն՝ ուր ամեն Գ. և Ուր. օրերը ժամ 5—10 աշակերտ կընդունի Օր. Ղամբէուհի Ց. Թիւլպէնտճեան, որոյ հմտութիւնն արդէն հանրածանօթ է։

Գիները դիւրամատչելի են։

———

Տ· ԲՕԼ ՏՂ ԴՕԳ

ԿԻՆ ԽԱՂ ԳԻՆԻ

Թարգմանեալ ի Գաղղիերէնէ

Հրատարակէ Կ. Ա. Պապեան՝

Կը ծախուի ամեն Հայ գրավաճառաց քով։ Գին 10 ղուրուշ։

———

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐԸ

Գրեց Ց. Ց. Պարոնեան

Հրատարակէ Ս. Ղ. Պապիկեանեան

Ազգային ժամանակակից վէպ մ'է, որ տեսր առ տեսր սկսած է հրատարակուիլ, առաջին տեսրը ի լոյս ընծայուած ըլլալով, կը ծախուի գրավաճառ Ս. Ղուկասեան և Ֆրէնկեան գրատուններէն, սուճի Պօղոս աղայի խանութէն և լրագրավաճառներու քով ի գին 40 փարայ։

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ

1884

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԴԻՆ 100 ՓԱՐԱ

—

ՅՕՐԻՆԵԼ ՅԵՐԵՄԻԱ ՓԱՀԱՆԱՅԷ ԽԱՍՊԻՒՂԻ

——

ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. ՓՐԿՉԵԱՆ ԱԶԳԱՑԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՀՍՑՈՑ

——

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

—

Պարունակութիւն

Վիճակագիր տեղութեանց. — Հայրապետութիւն Հայոց. — Հայաստան աշխարհ կամ Արմենիա. — Օսմանեան միջազգային թղթատարութիւնք. — Ժամանակագոյց սուրհանդակաց Օսմանեան միջազգային թղթատարութեանց. — Եւրոպական նամակատունք ի Կ. Պոլիս. — Յուցակ գնոց թղթատարութեանց և հեռագրութեանց եւրոպական և Ասիական քաղաքաց Թուրքիոյ. — Սակագին հեռագրի ըստ նոր կարգադրութեանց միջազգային թելերու. — Ընկերութիւնք չոգեշարժ նաւարկութեան, ինչպէս են, Եգիպտական (Խեդիվեյէ). — Մահտեսէ. — Աւստրօ-Հունգար Լոյտ. — Մէսաժըրի Մարիթիմ. — Բաքէ էնէ և ընկերութիւն. — Ռուսական ընկերութիւն. — Ընտանեկան դեղարան։

ԱՐՏՕՆԱՏԷՐ Հ. Ե· ԳԻՄԱՔՍԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ Մ· ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՒՔԱՑԷԼ ՍԱՐԳԵՍԵԱՆ

Մէրճան չարչի Րհաչոլ էֆ. խանի տակ թիւ 20